ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24.05.2021

Տիպ՝ Մրցույթի մասին հրապարակային ծանուցումներ
Հայտատու՝ Տաշիրի համայնքապետարան
հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդված

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու բաց մրցույթ: Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի հունիսի 25-ին՝ ժամը 11:30, Տաշիրի համայնքապետարանում՝ Վ. Սարգսյան 94 հասցեում:
Մրցույթի է դրվում հետևյալ լոտերը՝
Լոտ 1. Տաշիր համայք, ք.Տաշիր, 06-008-0440-0140 կադաստրային ծածկագրով, 5.50179 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահողը , 10 տարի ժամկետով, 101630 դրամ մեկնարկային գնով:
Լոտ 2. Տաշիր համայք, ք.Տաշիր, 06-008-0440-0141 կադաստրային ծածկագրով, 4.08708 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահողը , 10 տարի ժամկետով, 75500 դրամ մեկնարկային գնով:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում, այն հարում է հաղորդակցության ուղիներին:
Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.
ա/ հայտ,
բ/ մրցույթի մասնակցության համար սահմանված 2000 ՀՀ դրամի չափով վճարի անդորրագիր,
գ/ անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:
Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է 2021 թվականի հունիսի 22-ին՝ ժամը 18:00-ին:
Մրցույթի անցկացման օրը վճարվում է նախավճար հողամասի մեկնարկային գնի 5 % չափով:
Մրցույթում հաղթող է ճանաչվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը: Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է Տաշիր համայնքի բնակչին կամ Տաշիր համայնքում գրանցված իրավաբանական անձին:
Մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը տեղի կունենա հունիս 6-ին:
Մրցույթի կանոնակարգին մասնակիցները կարող են ծանոթանալ ամեն օր՝ ժամը 9:00–18:00 ընկած ժամանակահատվածում Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, գյուղատնտեսության, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնում:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-21-68, 2-34-06 հեռախոսահամարներով:

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր Վ. Սարգսյան 94

Հեռ.՝ 025422168,025423406

Վեբ կայք՝ tashircity.am

Էլ. փոստ՝ tashirhamaynq@bk.ru